Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

# Գենդերային բյուջետավորում

Սվետա Հարոյան

Երևան 2009



## Գենդերը և բյուջեն

### Ի՞նչ է գենդերը

✓ *Գենդերը հասարակության մեջ կանանց և տղամարդկանց սոցիալապես ձևավորված տարբեր դերերի, պարտականությունների, կարիքների ու ընդունակությունների գաղափարն է:*

- Գենդեր չի նշանակում սեռ կամ կին:
- Գենդերային հավասարությունը չի նշանակում կանանց և տղամարդկանց նույնացում, այլ՝ նրանց հնարավորությունների, ռեսուրսներից, բարիքներից և արդյունքներից օգտվելու հավասարություն:
- Ավանդական բյուջեները հաշվի չեն առնում գենդերային հիմնախնդիրները, այլ կերպ ասած՝ «գենդերային կույր» են:

## Գենդերային բյուջետավորում

### Ի՞նչ է գենդերային բյուջեն

✓ *Գենդերային բյուջեն գենդերային հիմնախնդիրների լուծմանը, տղամարդկանց և կանանց հավասար լիազորությունների, հնարավորությունների ընձեռմանը ուղղված գործընթաց է, որը բացահայտում է կատարված ծախսերի և իրականացված քաղաքականությունների ուղղակի և անուղղակի ազդեցությունը հասարակության տարբեր խմբերի վրա:*

- Գենդերային բյուջետավորումը չի՛ նշանակում
  - ✓ կանանց համար առանձին բյուջե
  - ✓ բյուջեների հավասար բաժանում
  - ✓ կանանց համար նախատեսված ծրագրերին ուղղված ծախսերի ավելացում

Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորում (շարունակություն)

- Գենդերային բյուջետավորումն ապահովում է, որ տարբեր սոցիալական խմբերի, անհատների կարիքներն ու հետաքրքրությունները արտահայտվեն եկամտային և ծախսային քաղաքականություններում: Այն կարող է ենթադրել եկամուտների և ծախսերի կառուցվածքային փոփոխություն՝ ելնելով ողջ հասարակության շահերից:

- Գենդերային բյուջետավորումը ճանաչում և հաշվի է առնում այն միջոցները, որոնցով կանայք նպաստում են հասարակության և տնտեսության զարգացմանը՝ ինչպես որպես չվճարված աշխատուժ, այնպես էլ հասարակության դաստիարակության և խնամքի հոգսը կրող: Ճանաչում է նաև բյուջետային քաղաքականությունների և կանանց բարեկեցության ընդհանրություններ:

- Գենդերային մոտեցումը հաշվի է առնվում բյուջետային գործընթացի բոլոր փուլերում և կարող է իրականացվել թե՛ պետական, թե՛ համայնքային բյուջեների մակարդակով:

- Գենդերային բյուջետավորման առաջին փորձը տեղի է ունեցել Ավստրալիայում 1984 թվականին: Ներկայում գենդերային բյուջետավորումը անցկացվում է ավելի քան 60 երկրում:

Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման գործընթացը




Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման գործընթացը (շարունակություն)

- Գենդերային բյուջեի մոնիտորինգի համար կարևոր է ի սկզբանե հստակորեն սահմանել՝

- ✓ նպատակները
- ✓ ցանկալի արդյունքները
- ✓ պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները
- ✓ կիրառվող գործիքները
- ✓ անհրաժեշտ գործողությունները

Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման առավելությունները

### Ինչու՞ է անհրաժեշտ բյուջեի գենդերային վերլուծությունը

- ✓ կանանց աշխատանքը դարձնում է տնտեսապես տեսանելի
- ✓ ցույց է տալիս, թե եկամուտների հավաքագրումը և հարկերի կառուցվածքում փոփոխությունները ինչպես են ազդում տղամարդկանց և կանանց՝ մասնավորապես ոչ ֆորմալ հատվածում զբաղված կանանց և միայնակ մայրերի վրա
- ✓ առավել թափանցիկ, հաշվետվողական և հետևողական է դարձնում ֆինանսական քաղաքականությունը
- ✓ ապահովում է հաշվետվողականության պարտավորվածություն՝ արտահայտելու կանանց հետաքրքրությունները, հնարավորությունները և իրավունքները
- ✓ ապահովում է քաղաքականություն իրականացնողներին կանանց և տղամարդկանց կարիքների տարբերության վերաբերյալ տեղեկատվությամբ
- ✓ ուսումնասիրում է քաղաքական որոշումների և դրանց իրականացման համար պահանջվող ռեսուրսների միջև տարբերությունները՝ բացահայտելով, թե արդյո՞ք հանրային միջոցները ծախսվում են գենդերային արդար եղանակով
- ✓ հանդիսանում է աղքատության հաղթահարման կարևոր գործիք
- ✓ արտահայտում է կանանց նախընտրությունները բյուջետային ծախսերում և եկամուտներում (ոչ թե միայն քաղաքականություններում, պլաններում և ծրագրերում)

Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման առավելությունները

### Որպես կառավարման համակարգի տարր գենդերային բյուջետավորումը՝

- ✓ պոտենցիալ հնարավորություն է վերացնելու քաղաքականությունների և բյուջեների միջև անհամապատասխանությունը
- ✓ տալիս է գենդերային ուղղվածությունը կոնկրետացնելու գործիքներ
- ✓ ենթադրում է բյուջեների և քաղաքական ծրագրերի համադրում
- ✓ տալիս է գործիքներ գնահատելու կառավարության քաղաքականությունները, ծրագրերը և բյուջեները
- ✓ նպաստում է կանանց խմբերի մասնակցությանը բյուջետային քննարկումներին

- Գենդերային բյուջետավորում իրականացրած երկրների փորձը ցույց է տվել, որ գենդերային բյուջեն մեծացնում է արտադրողականությունը և ՀՆԱ-ն

## Գենդերային բյուջետավորման նպատակները

- ✓ **Հավասարություն**
  - գնեդերային հավասարությունը դառնում է նպատակ և տնտեսական զարգացման ցուցանիշ
  - ոչ միայն հավասար հնարավորություններ կամ ռեսուրսներ, այլ նաև հավասար արդյունքներ կանանց և տղամարդկան համար
- ✓ **Պատասխանատվություն**
  - գենդերային քաղաքականությունների նկատմամբ կառավարության պատասխանատվության ուժեղացում
  - քաղաքականությունների իրականացման ընթացքում գենդերային հիմնախնդիրների հաշվի առնում և ռեսուրսների արդար բաշխում
- ✓ **Թափանցիկություն և մասնակցություն**
  - որոշումների կայացման և բյուջեի կազմման գործընթացներին կանանց և ամբողջ հանրության մասնակցության ապահովում
  - բյուջեի կազմման և արդյունքների մոնիտորինգի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում
- ✓ **Արդյունավետություն**
  - կանանց, տղամարդկանց և երեխաների վիճակի վրա գենդերային անհավասարության բացասական հետևանքների կրճատում
  - ռեսուրսների բաշխում՝ ելնելով գենդերային առանձնահատկություններից



## Նախապայմանները և մասնակիցները

### Ի՞նչ նախապայմաններ են անհրաժեշտ

- ✓ քաղաքական կամք
- ✓ պատասխանատվության զգացում
- ✓ ինֆորմացիայի, մեթոդների, գործիքների և փորձերի համադրում
- ✓ գենդերային տվյալների հասանելիություն
- ✓ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ

### Ովքե՞ր են մասնակիցները



Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման կիրառման գործիքները

### Ինչպե՞ս բյուջետավորել

- ✓ Գնահատել պետության ստանձնած պարտավորությունները (միջազգային ստանդարտներ, տեղական օրենքներ և այլն)
- ✓ Գնահատել կանանց իրավունքների ցանկալի ձեռք բերումների համար նախատեսված և անհրաժեշտ ծախսերի ճեղքվածքը
- ✓ Տարբերակել բյուջետային քաղաքականությունները ըստ կանանց դերի (որպես քաղաքացիներ, խոցելի խմբեր, վերարտադրության և զարգացման մասնակիցներ և այլն)
- ✓ Ապահովել բյուջետային գործընթացներում բոլոր խմբերի խելամիտ մասնակցությունը

Գենդերային բյուջետավորում

## Գենդերային բյուջետավորման կիրառման գործիքները

### Որո՞նք են գենդերային բյուջետավորման գործիքները

- ✓ Քաղաքականության գենդերային գնահատում
- ✓ Ծրագրերի շահառուների գնահատում գենդերային տեսանկյունից
- ✓ Պետական ծախսերի իրականացման ոլորտի գենդերային վերլուծություն
- ✓ Ժամանակի օգտագործման վրա բյուջեի ազդեցության գենդերային վերլուծություն
- ✓ Միջին ժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾԾ)
- ✓ Հարկերի գենդերային վերլուծություն
- ✓ Բյուջեի ձևավորում՝ գենդերային զգայուն եղանակով

## Գենդերային բյուջեի վերլուծության հիմնական քայլերը

- ✓ Բնութագրել կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների իրավիճակը
- ✓ Ստուգել քաղաքականության գենդեր-զգայունությունը
- ✓ Ստուգել բյուջետային բաշխումների գենդեր-զգայունությունը և համապատասխանությունը քաղաքականություններին
- ✓ Ստուգել ծախսերի կատարումը
- ✓ Ուսումնասիրել ծախսերի և քաղաքականությունների ազդեցությունը. արդյո՞ք այն աջակցել է գենդերային հարաբերություններին
- ✓ Նշված քայլերը կարող են կիրառվել.

  - ինչպես արտաքին օգտագործողների, օր՝ ՀԿ-ների կողմից, որոնք գնահատում են կառավարության գործունեությունը

  - այնպես էլ կառավարության կողմից, որը մշակում և իրականացնում է քաղաքականությունները



## Դիսագրեգացիա և գենդեր զգայունություն

- ✓ Սեռային դիսագրեգացիան ենթադրում է տարբերակում ըստ կանանց և տղամարդկանց, օր՝.

  - Հիվանդությունը կանխարգելված կանանց և տղամարդկանց քանակ
  - Կին և տղամարդ բժիշկների քանակ

- ✓ Գենդեր զգայուն տվյալներ =

  Դիսագրեգացիա +

  Տվյալներ, որոնք կարևոր են գենդերի տեսանկյունից, օր.՝

  - Տվյալներ մանկական մահացության վերաբերյալ
  - Տվյալներ կանանց դեմ բռնության վերաբերյալ

## Գենդերային զգայուն ծրագրեր

Ծրագրեր, որոնք ուղղված են կոնկրետ կանանց (տղամարդկանց) խմբերին, միաժամանակ, ծրագրից կարող են օգտվել նաև տղամարդիկ (կանայք)

Ծրագրեր, որոնց առաջնային նպատակը գենդերային հավասարության հաստատումը չէ, սակայն այդ ծրագրերի արդյունքները կարող են անդրադառնալ գենդերային հարաբերությունների վրա

Ծրագրեր, որոնք ուղղված են աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց հավասարության հաստատմանը

Ծրագրեր ուղղված կանանց իրավունքների պաշտպանությանը

Ծրագրեր, որոնք ուղղված են պետական ապարատում ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց ներկայության և որոշումների կայացման ընթացքում հավասար մասնակցության ապահովմանը

Ծրագրեր, որոնք ուղղված են գենդերային հավասարությանը՝ անկախ նրանից՝ շահառուները կանայք են, թե տղամարդիկ



## Գենդերային զգայուն ծախսեր

**Ըստ Շարպի մոտեցման բաժանվում են՝**

- ✓ Հատուկ գենդերային ծախսեր
- ✓ Հավասար հնարավորությունների ապահովման ծախսեր
- ✓ Հիմնական ծախսեր (մնացած բոլոր ծախսերը, որոնք ներառված չեն առաջին երկու խմբերում)

## Գենդերային բյուջետավորման խոչընդոտները

✓գենդերային հավասարության էության թերըմբռնում

✓քաղաքական կամքի պակաս

✓գենդերային տվյալների պակաս

✓համապատասխան մասնագետների պակաս

✓ժամանակի սղություն

✓գենդերային բյուջեի կարևորության թերըմբռնում

✓մասնագետներին տրամադրված ռեսուրսների սղություն



## Հիշե՛ք

✓ Գենդերային բյուջեն այն մասին չէ, թե որքան գումար է ծախսվում կանանց ծառայությունների վրա:

✓Այն գործառնությունների համար գումար բաշխելու մասին է, որոնք օգնում են վերացնել գենդերային խոչընդոտները կանանց համար

***Բացահայտում:*** Գենդերային խնդիրների վերանայում և իրավիճակի վերլուծություն:

***Պլանավորում:*** Բաղադրիչների, գործողությունների և առաջնայնությունների սահմանում:

***Բյուջետավորում:*** Գենդերային հավասարությանն ուղղված ռեսուրսների բաշխում, ինչպես նաև ցուցանիշների մշակում:

Շնորհակալություն